

**ԱՇԽԱՐՀԻԿ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ  
(1289-1293)**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Ս.

Կիլիկիայի հայկական պետականության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների հարցն է, որը դուրս է մնացել ուսումնասիրողների հետաքրքրությունների տեսադաշտից: Հիմնախնդիրը ինքնին արժանի է առանձին ուսումնասիրության, քանզի փոխհարաբերությունները արտացոլում էին ոչ միայն Կիլիկյան Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի զարգացման առանձնահատկությունները, այլև ներառում էին հայ հասարակության մյուս հատվածների հետ ունեցած առնչությունները:

Փորձենք պարզաբանել Հեթում Բ-ի գահակալության առաջին շրջանի հետ աղերսվող մի շարք հարցադրումներ, մասնավորապես՝ ա) իրավաքաղաքական ի՞նչ շրջանակներում էին առնչվում աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները, և ի՞նչ փորձեր էին արվում հաղթահարելու միջնադարի պետականության կազմակերպմանը յուրահատուկ երկակի սկզբունքը, բ) ի՞նչ հատկանիշներ էր ընտրում աշխարհիկ իշխանությունը, երբ ձգտում էր աստվածային հեղինակության և հակառակը՝ երբ հոգևոր նվիրապետությունը աշխատում էր յուրացնել քաղաքական իշխանությանը յուրահատուկ հատկանիշներ, գ) աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների վրա ինչպիսի՞ ազդեցություն էին գործում հայ-հռոմեական և հայ-հունական եկեղեցական հարաբերությունները:

Հեթում Բ-ի գահակալության առաջին շրջանում հայոց կաթողիկոսությունը դեռևս գտնվում էր Հռոմկլայում, որը որոշակի ազդեցություն էր թողնում աշխարհիկ և սրբազան իշխանությունների փոխհարաբերությունների վրա, քանի որ Հռոմկլան Կիլիկյան Հայաստանի վարչաքաղաքական սահմաններից դուրս էր:

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով ձևավորվել էր չորս ենթահամակարգից բաղկացած համակարգ, որը ներառում էր՝ ա) հարաբերականորեն ինքնավար երկու իշխանությունների փոխհարաբերությունները կարգավորող ավանդույթը, բ) Աստվածաշնչից, Առաքելական կանոնախմբից, եկեղեցական ժողովների որոշումներից, «հայրաբանական գրականությունից» քաղված նորմեր, որոնք հիմնականում ունեին բարոյական սահմանումների բընույթ, գ) իրավանորմեր, որոնք կարգավորում էին թագավորական իշխանության և կաթողիկոսության կազմակերպման ձևերը և իրավունքները, դ) հատկանիշներ, որոնք իրենց գործունեության ընթացքում յուրացնում էին առանձին թագավորներ և կաթողիկոսներ ու աշխատում էրկու իշխա-

նությունների փոխհարաբերությունները կարգավորել դրանց շրջանակներում:

Կիլիկիայի հայկական պետության և հայոց եկեղեցու փոխհարաբերություններն իրենց բնույթով և կառուցվածքով տարբերվում էին նախորդ շրջանում ձևավորված իրավիճակից: Պետականության զարգացման բնականոն ընթացքը դանդաղորեն տանում էր նրան, որ եկեղեցին դառնում էր մշակութային գործառույթներ իրականացնող համակարգ:

Հռոմկլայում հաստատված հայոց կաթողիկոսությունը ներկայացնում էր ողջ հայ հասարակությունը, մինչդեռ Կիլիկյան Հայաստանը՝ որպես վարչաքաղաքական միավոր, միայն մի մասին: Մյուս կարևոր առանձնահատկությունը այն է, որ, բացի հայերից, Կիլիկյան Հայաստանում ապրում էին նաև այլ էթնիկ ընդհանրություններ: Նախորդ ժամանակաշրջանում հայոց եկեղեցին յուրացրել էր եկեղեցաքաղաքական լայն իրավունքներ, ուստի հանգրվանում էր ձևավորված ամուր ավանդույթի վրա, իսկ Կիլիկյան Հայաստանը, շարունակելով հայոց պետականության ավանդները, կրում էր նաև տարածաժամանակային այլ հատկանիշների ազդեցություն: Ավանդականության և նորի միջև ձևավորված հակասությունները հաղթահարելու համար աշխատում էին ավանդույթը խմբագրել և ներառել աշխարհիկ իշխանության գործունեության շրջանակներում. «Եւ մանաւանդ առաւել տենչմամբ սրտի սիրելով զհայրենի և պարծելի բնիկ Հայկազանց աշխարհն՝ զՏունն Արևելից՝ որ առաջին է մասն և գլուխ արիւնակ իմն բոլոր աշխարհի, զի անտի սկսանին ի ձեռն լուսաւորացն՝ աշխարհի շարժմունք և կամ թէ կոչել զնոյն աշխարհի իրաւ հայր և հաւ մարդկութեանս...»<sup>1</sup>:

Կիլիկիայում հայկական պետականության ձևավորման ժամանակ հայոց կաթողիկոսությունը գտնվում էր երկրի վարչաքաղաքական սահմաններից դուրս, ուստի երկրամասի եկեղեցական կենտրոնի դերը ստանձնել էր Տարսուսի, իսկ հետագայում՝ Սսի արքեպիսկոպոսական աթոռը: Վերջինս ժամանակի ընթացքում յուրացրել էր նաև հոգևոր իշխանությանը ոչ յուրահատուկ հատկանիշներ: Սսի արքեպիսկոպոսը միաժամանակ գլխավորում էր Կիլիկիայում իր նշանակությամբ երկրորդ դատական ատյանը՝ Սսի արքեպիսկոպոսական դատարանը (*Curia Sisensis episcopi*) և արքունի քարտուղարությունը: Պատահական չէ, որ Սսի արքեպիսկոպոսի պաշտոնը սովորաբար տրվում էր արքայատան անդամներից որևէ մեկին կամ արքունիքին առավել մոտ կանգնած անձնավորության:

Քննարկվող ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքում ձևավորված բարդ ռազմաքաղաքական իրավիճակը և մահմեդական միջավայրի հզորացումը իրական վտանգ էին ներկայացնում Կիլիկյան Հայաստանի տարածքային ամբողջականության, ապա՝ անկախության համար: Ստեղծված դրությունից ելք գտնելու համար աշխատում էին զինակցել քրիստոնյա աշխարհի, մասնավորապես Բյուզանդիայի, Կիպրոսի խաչակրաց թագավորության և Արևմտյան Եվրոպայի հետ: Կիլիկյան Հայաս-

<sup>1</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Ե., 1984, էջ 570:

տանի քրիստոնյա բնակչությանը (հույներ, արևմտաեվրոպացիներ, ասորիներ) ևս պետք է ներգրավելին երկրի պաշտպանության գործում: Զինակցության անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար բոլորը պետք է միավորվելին համաբնույթ միջավայրի շուրջ, մինչդեռ նրանց միջև առկա էին դավանաբանական որոշակի տարբերություններ: Պատահական չէ, որ այս շրջանում վերստին աշխուժացան եկեղեցական բնակչությունները Կիլիկյան Հայաստանի, պապականության և Բյուզանդիայի միջև, որում հոլովվում էր եկեղեցիների միավորման խնդիրը:

Այսպիսով, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններում ստեղծվել էր բարդ ու խճճված իրավիճակ, որը կապված էր նաև Հեթում Բ-ի գահակալության հետ: Լևոն Գ թագավորի (1269-1289) ավագ որդի Հեթումը արքայազնի իրավունքներով նախապատրաստվում էր ժառանգել հայոց գահը. «Յորում ամի (իմա՝ 1283) բարենշան և բարեպաշտ անդրանիկ որդին արքայիս մերոյ պարոն Հեթում զձիաւորութեան աշտիճան ընկալաւ, և այժմ տիրէ աստուածապահ դղեկիս (իմա՝ Լամբրոն) և այլ շուրջակայ գաւառացս...»<sup>2</sup>: Ինչ վերաբերում է ապագա թագավորի մտավոր դաստիարակությանը, ապա՝ «...Եւ զի ունէր որդիս Է (7), ետ երեց որդոյն զԼամբրոն, որում անուն էր Հեթում, որ և սա սիրէր գտուրբս և զքաղցրութեամբ լսէր: Բայց ետ նմա թագաւորն ուսուցիչ զՎահրամ, որ էր բանիբուն և ճարտասան աներկեղ, միանգամայն անամաւթ և քաջաբան, զի ունէր զաղանդ քաղկեդոնական, բայց երկնչէր խաւսել յայտ յանդիման, զի թագաւորն իշխանաւքն և այլ գիտնականաւքն ուղղափառք էին: Մակայն ապականեալ դեղեաց զՀեթում՝ տէր Լամբրոնին»<sup>3</sup>: Հետաքրքիր է, ի՞նչ նկատառումներով է Լևոն Գ-ն արքայորդու մտավոր դաստիարակությունը վստահում քաղկեդոնիկ վարդապետին, որից հետո «ձիաւորութեան աստիճան» ստացած Հեթումը դառնում է կրոնավոր: Շուտով նա ժառանգում է հայոց գահը: Եթե Հեթումի «կրոնավորումը» գիտակցաբար էր կատարվել, ապա այն պետք է ունենար ներքին և արտաքին որոշակի դրդապատճառներ: Պարզ է, որ «...յոժ սիրող իմաստութեան զրոց, եւ միաբանութեան քրիստոնէից ազգաց...»<sup>4</sup> կողմնորոշում ունեցող թագավորի կրոնավորումը պատահական չի կարելի համարել. «Նա և զանուն թագաւորութեանն ծանր կրէր, և նուիրէր զանձն Աստուծոյ, և յոլով անգամ հրաժարէր ի հայրենական աթոռոյն՝ զնայր յաղքատանալ, զոր հազիւ հազ մեծաջան տենչիւ ոչ կարէին յեղաշրջել զկամն նորա»<sup>5</sup>:

Հեթումի գահակալության հետ առնչվող մյուս հարցադրումը վերաբերում է աշխարհիկ իշխանության որոշ հատկանիշների յուրացման խնդրին: Բանն այն է, որ կառավարման ամբողջ ընթացքում Հեթումը այդպես էլ չօժվեց թագավոր և սովորաբար հանդես էր գալիս «ժառանգաւոր թագին», «բարեպաշտ պարոն հայոց» տիտղոսներով: Խնդիրը պարզաբանելու համար նախ դիմենք նրա թողած բացատրությանը. «Եւ

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 538:

<sup>3</sup> **Բաղդասարյան Է.**, Գևորգ Սկևռացու վարքը (Բանբեր Մատենադարանի, 1964, N 7, էջ 421):

<sup>4</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 701:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 751:

ինձ անանդեցին ժառանգութեան թագաւորութեանս հայոց: Եւ իմ Հեթմոյս տեսեալ զիմ անարժանութիւն, յառաջ քան զկոչելն զիս, հրաժարեցի, և զձև թագաւորական փոխեցի ընդ ձև կրանաւորական, որ և զՀեթում անունս Յովանէս վերայփոխեցի...»<sup>6</sup>: Հետաքրքիր է, ինչո՞ւ Հեթումը այդպէս էլ «ոչ պսակեցաւ թագիւ», սակայն եթէ չհաշվենք այն դեպքերը, երբ կարճ ժամանակով թողնում էր արքունիքը և քաշվում վանք, չհրաժարվեց աշխարհիկ իշխանությունից: Անձնական և հասարակական-քաղաքական ինչ դրդապատճառներով էր պայմանավորված նման գործելակերպը, որը էական ազդեցություն թողեց հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների վրա: Եթէ խոսքը. «...փափագմամբ և ըղձաւետ տենչանօք խոկայր միշտ գտանել զերկնաւորն թագաւորութիւն...»<sup>7</sup>, ապա թագավորական իշխանությունը դրան հասնելու լավագույն ճանապարհը չէր: Սա հասկանալի էր նաև Հեթումի համար, «...զի նա ինքն որ արհամարհեաց զմարմին և որ ինչ նորա են պատաղմունք...»<sup>8</sup>: Այս դեպքում կարելի է արձանագրել, որ նա աշխատում էր դավանանքը ներառել քաղաքականության բնագավառ, որն անհրաժեշտ էր աստվածային օրհնանք ստանալու համար:

Փաստորեն, Հեթումը աշխատում էր յուրացնել «Սուրբ երրորդության» որոշ հատկանիշներ, որը կիսախտեր երկու հարաբերականորեն ինքնավար իշխանությունների փոխհարաբերությունները կարգավորող այն սկզբունքը, ըստ որի՝ թագավորը ինքը եկեղեցու անդամ էր, իսկ հոգևորականները, այդ թվում՝ կաթողիկոսը, պետության քաղաքացիներ<sup>9</sup>: Նախկինում ձևավորված փոխհարաբերությունների կարգավորման իրավանորմը արձանագրված էր Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» աշխատության մեջ. «Զի թէ մարդ պատկեր է Աստուծոյ, եւ որք ի Քրիստոս մկրտեալ են՝ զՔրիստոս զզեցեալ են, որչափ եւս առաւել թագաւորք հաւատացեալք, որք ի վերայ զլիսոյն բերեն զնշան տերունոյն...»<sup>10</sup>: Այժմ երբ թագավորը աշխարհական հավատացյալից դառնում է կրոնավոր, փոխվում են փոխհարաբերությունների բնույթը և կառուցվածքը, քանզի եկեղեցական օրենսդրությունը և միջեկեղեցական հարաբերությունները կենտրոնանում են հայոց արքունիքում:

Հոգևոր իշխանության գործերին Հեթումը սկսել էր միջամտել թագավորական իշխանությունը ժառանգելուց առաջ. «Յայնժամ եպիսկոպոսն Անարգաբու Գրիգոր եկն առ նա և գտին զիրեարս համախոհք: Եւ զի էր Գրիգորն քաջ գիտնական և կատարեալ տէլէտ, էտուն միմեանց բանս և եղև նորա բերան, և գորս խաւսէր՝ թէ յիւրոցն և կամ ի նորայոցն, իւրողութիւն և խաւար ածէր եկեղեցոյ: Բայց որչափ թագաւորն Լևոն կենդանի էր և սինք եկեղեցոյ սրբոյս համախոհքն, զերծանելի կարծիսն

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 705:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 789:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 789:

<sup>9</sup> **Мажуга В.**, *Королевская власть и церковь во Франкском государстве VI в. Политические структуры эпохи феодализма в Западной Европе (VI-XVII вв.)*, Л., 1990, с. 46-70.

<sup>10</sup> **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, աշխատասիրությանը՝ Խ. Թորոսյանի, Ե., 1975, էջ 137:

առողք և լինել՝ լուծանէին և խափանէր»<sup>11</sup>: Գր. Անավարզեցին Հակոբ Ա կաթողիկոսի (1268-1286) քրոջ որդին էր: Սկզբում նա Մեծքար (Մեծ այր) ուխտի առաջնորդն էր, ապա Անավարզայի թեմակալը<sup>12</sup>: Վերջին պաշտոնում նա հիշատակվում է՝ սկսած 1283 թ.<sup>13</sup>: Նա դառնում է Հեթումի գործընկերը և խորհրդատուն: Նրանց համատեղ գործունեության այս փուլը առանձնանում է նրանով, որ աշխատում են հայոց եկեղեցական միջավայր ներմուծել հռոմեական և հունական դավանանքի որոշ հատկանիշներ. «...Եւ արհամարս և ծիծաղելիս զարէնս, որով վարին Հայք, ցուցանէր: Եւ կարգեաց գնա ի կարգս հերետիկոսաց և ինքն խընդայր ի վճար գործոյն»<sup>14</sup>: Հավանաբար այս ժամանակ էլ Գր. Անավարզեցին խմբագրում է «Յայսմաւորք» ժողովածուն, որտեղ հայոց եկեղեցու տոները կարգավորված են ըստ լատինական և հունական եկեղեցիներում ընդունված տոնակարգերի<sup>15</sup>: Փաստորեն, Հեթումը և Գր. Անավարզեցին աշխատում էին դավանաբանական զիջումների ճանապարհով հայոց եկեղեցին ներառել տիեզերական եկեղեցու համակարգում, որպէսզի եկեղեցիների միավորման խնդիրը լուծելի դարձնեն: Այս ծրագրի իրագործման համար Հեթումը կազմակերպեց Կոստանդին Կատուկեցի կաթողիկոսի (1286-1289) գահընկեցությունը. «Տէր Կոստանդին, որ էր տեսուչ Խորինին, զսա թագաւորն Հայոց Լեւոն, իւրով ընտրութեամբն ետ ձեռնադրել կաթողիկոս Հայոց, զոր Հեթում որդի թագաւորին Լեւոնի, յետ վախճան հաւրն արար ժողով, եւ դարձեալ ձգեցին յաթոռոյ վասն սխալման իրիք ինչ, եւ տարան արգելեցին ի դղեակն, որ կոչի Մոլավոն (այլ տարբերակներում Լամբրոն) եւ այդ եղել ի թուականութեանն ՉԼԼ, կացեալ յաթոռն ամս Բ եւ կէս...»<sup>16</sup>: Կաթողիկոսին ներկայացված երեսուն մեղադրանքի այն կետերը, որոնք մեզ ծանոթ են<sup>17</sup>, հազիվ թէ իրավունք տային աշխարհիկ իշխանությանը՝ նրան գահընկեց անելու և բանտարկելու:

Դրանք կաթողիկոսության համար թույլատրելի «մեղքեր» էին և հատուկ էին համարյա բոլոր կաթողիկոսներին: Կաթողիկոսի բանտարկման պատճառներից մեկի վերաբերյալ հետաքրքիր դիտողություն ունի Ստ. Օրբելյանը. «...այլ կարծիս իմն բերեալ ի միտս եթէ ելանիցէ յայսմ իշխանութենէ և երթեալ ի վերին աշխարհն յարևելից. և անդ ընկալեալ լիցի պատուով կաթողիկոսութեան»<sup>18</sup>: Կիլիկյան Հայաստանի և Մեծ Հայքի ներքին միասնության ընկալման գործում որոշակի էր Հռոմկլայի հայոց կաթողիկոսության դերը, իսկ աթոռի տեղափոխումը և Կիլիկիա

<sup>11</sup> **Բաղդասարյան Է.**, նշվ. աշխ., էջ 421: Գրիգոր Անավարզեցու մասին առավել մանրամասն տե՛ս **Մաղոյան Գ.**, Գրիգոր Անավարզեցին շարականագիր, Ե., 2001:

<sup>12</sup> **Սարգսեան Գր.**, Գրիգոր Անավարզեցին հայրապետ և գրիչ (Բազմավեպ, 1947, (9-10), էջ 202):

<sup>13</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 537:

<sup>14</sup> **Բաղդասարյան Է.**, նշվ. աշխ., էջ 426:

<sup>15</sup> **Սարգսեան Գր.** Գրիգոր կաթողիկոս Անավարզեցի, մատենագիր [Բազմավեպ, 1949, (3-4), էջ 58-66]:

<sup>16</sup> Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. VII, կազմեց՝ Ն. եպիսկոպոս Պողարեան, Երուսաղեմ, 1974, էջ 450:

<sup>17</sup> Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 439-440:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 439:

յում նոր կաթողիկոսության հիմնարկումը կխախտեին ձևավորված իրավիճակը: Խնդրի մյուս կողմն այն է, որ դեռևս 1286 թ. Հեթումը փորձեց Գր. Անավարզեցուն դարձնել կաթողիկոս, սակայն չկարողացավ<sup>19</sup>: Կոստանդին Կատուկեցու գահընկեցությունից հետո նա նորից փորձեց Գր. Անավարզեցուն ընտրել հայոց կաթողիկոս, սակայն այս անգամ ևս այդ ծրագիրը ձախողվեց:

ԺԳ դարի երկրորդ կեսին հաստատված կանոնակարգի համաձայն՝ հայոց կաթողիկոսի ընտրությանը պետք է մասնակցեին նաև Սյունիքի, Արտազի, Այրարատի և Աղթամարի աթոռները, սակայն 1289 թ. ժողովին ներկա էին միայն Կիլիկիայի և հարակից շրջանների ներկայացուցիչները: Հակառակ Հեթումի գործադրած ջանքերի՝ կաթողիկոս ընտրվեց ոչ թե Գր. Անավարզեցին, այլ Ստեփանոս Հռոմայեցին: Սակայն սա չիսանգարեց, որ իր եկեղեցական գործունեության շնորհիվ Հեթումը արժանանա այն հեղինակությանը, որը սահմանված էր թագավորական իշխանության աստվածային ծագման շրջանակներում. «...և յաթոռ թագաւորութեան Հայոց սուրբն Հեթում, որում ոչ ոք համեմատ ի թագաւորս, բայց Քրիստոս միայն...»<sup>20</sup>:

Հեթումի եկեղեցական քաղաքականության արտաքին դրդապատճառների հիմքում ընկած էր եկեղեցիների միավորման ծրագիրը, որի կենսագործմանը հետամուտ էր նաև պապականությունը: Եթե վերջինիս հա-մար այդ ծրագրի իրագործումը կապահովեր «Սուրբ Պետրոսի» աթոռի իրավահաջորդների գերագահությունը ընդհանրական եկեղեցում, ապա Հեթումը և նրա կողմնակիցները փորձում էին՝ ա) ընդհանրության շրջանակներում հասնել քրիստոնյա աշխարհի միասնության, բ) հայոց եկեղեցին դուրս բերել ինքնամփոփ վիճակից և ներառել միջազգային եկեղեցական հարաբերությունների համակարգ: Այս դեպքում Հեթումի գործունեությունը անխզելիորեն առնչվում էր պապականության, մասնավորապես՝ Նիկողայոս Դ պապի (1288-1292) արևելյան քաղաքականության հետ: Ամենայն հավանականությամբ, Հեթումի կրոնավորման գործում անմասն չէին Կիլիկյան Հայաստանում հաստատված ֆրանցիսկյան միաբանության անդամները<sup>21</sup>: Պատահական չէ, որ նա ընդունել էր Հովհաննես անունը՝ ի պատիվ ֆրանցիսկյան միաբանության անդամ Հովի. Մոնտեկորվինոյի, որը ԺԳ դարի 80-ական թթ. լայն գործունեություն էր ծավալել Արևելքում<sup>22</sup>:

Փաստորեն, Հեթումի եկեղեցական գործունեությունը խախտում էր աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև ձևավորված հավասարակշռությունը. «Եւ գիտել պարտէր եթէ թագաւոր յաղագս ընդ ձեռամբ անկելոցն դատի ի Տեառնէ, յորժամ արտաքին թշնամեաց ոչ պահեսցէ. իսկ զհաւատոյ բանն եկեղեցոյ զլուխն հոգասցէ...»<sup>23</sup>: Այս դեպքում

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 452:

<sup>20</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 772:

<sup>21</sup> *После Марко Поло. Путешествия западных чужеземцев в страны трех Индий. Перевод с латинского и староитальянского языков, введение и примечания Я. Света, М., 1968, с. 68-88.*

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 71:

<sup>23</sup> Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. III, կազմեց՝ Ն. Եպ. Պողարեան, Երուսաղեմ, 1968, էջ 613:

եկեղեցու «արտաքին օրենսդիրները» հենվում էին այն իրողության վրա, որ աշխարհիկ և եկեղեցական օրենսդրությունը բխում է միևնույն սկզբունքից. «Յառաջ պատեհ համարեցաք զվիճակեալ դատաւորացն գրել. բուն յառաջ զթագաւորացն, վասն զի յԱստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն, եւ յԱստուծոյ տեղին է համարած ի յերկրի: Եւ զնոցին դատաստանն եւ զիրաւունքն գրեցաք. եւ ապա զկարգաւորացն եւ զաշխարհականացն եւ զայրուկնոջն»<sup>24</sup>. Խոսքն այն մասին է, որ կանոնական իրավունքը ևս պետք է ներառվի համապետական օրենսդրական համակարգում, որի դեպքում թագավորը դառնում է համընդհանուր օրենս-դիր, մինչդեռ ավանդականությունը պահանջում էր. «Այլ եւ ազգիս Հայոց քահանայապետութիւն եւ թագաւորութեան զարինադրութիւն նախ պարտ էր յԱշտիշատ Տարաւնաւ հաստատել եւ ի Վաղարշապատ, յեկեղեց գաւառ եւ ի Դարանաղեաց, որք աւելի ունին քան զվեցհարիւր գաւազան կարգեալ, եւ ապա մասնաւորս Կիլիկիէ յանդամսն յաւդեր: Եւ թէ անփոյթ առնեն զարեւելից՝ ապա ում կոչին քահանայապետս կամ թագաւոր. այլոց ազգաց տիրել ոչ կարեն, եւ Կիլիկիէ, գրեթէ բազում ազգաւք լըրանայ. եւ ուր կառուցեն զկամս կամակորս...»<sup>25</sup>: Այստեղ հնչում են անցյալից ժառանգած գաղափարներ, որոնց կողմնակիցները աշխատում էին դրանք ներառել աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններում: Դրանցից կարևորվում էին՝ ա) սրբազան իշխանության առաջնությունը կանոնական հարաբերությունների կարգավորման բնագավառում, բ) սահմանվում են կաթողիկոսության և թագավորական իշխանության էթնոմշակութային և տարածաքաղաքական կազմակերպման իրավունքների սահմանները: Կիլիկիայից բացի, կաթողիկոսության կազմակերպումը ներառում էր նաև Հայաստանը և հայաբնակ շրջանները, իսկ թագավորական իշխանությունը՝ միայն Կիլիկյան Հայաստանը: Ամեն դեպքում, Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների համար արդեն հատկանշական էր սրբազան իշխանության ստորադասությունը. «Եւ այսոցիկ արինադիրքն ո՞վ կամ ուստի՞. իշխանք եւ զարականք, դասք զինուորաց, եւ այնքիկ որ եւ ոչ մտից եկեղեցոյն գոն արժանի: Որք զհոգս իւրեանց ի բաց ընկեցեալ՝ եկեղեցան ջանան պերճանալ. զի յիւրեանցն ամաթալի եւ վասն հեղձութեան, ծածկոյթ եւ պատրուակ առնեն զայս եպերանաց»<sup>26</sup>:

Փաստորեն, թագավորական իշխանության նման սրբազան հեղինակություն փորձում էին յուրացնել նաև տեղական կառավարողները, որը պատահական չէր, քանզի եկեղեցու սոցիալ-տնտեսական դրությունը հիմնականում կախված էր նրանց հողային և դրամական նվիրատվություններից:

1292 թ. մամլուքները գրավեցին Հռոմկլան: Հեթում Բ-ի նախաձեռնությամբ հրավիրված ժողովը որոշեց կաթողիկոսական աթոռը հաստատել Միս քաղաքում: Տեղի ընտրությունը պատահական չէր, քանզի

<sup>24</sup> **Սմբատ Սպարապետ**, Դատաստանագիրք, Հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գալստյանի, Ե., 1958, էջ 5:

<sup>25</sup> Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. III, էջ 613:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 615:

մայրաքաղաքում գտնվող աթոռի նկատմամբ գերագահության սահմանումը առավել հեշտ էր: Պատահական չէ, որ 1293 թ. Հեթումը ի վերջո կարողացավ կաթողիկոս ընտրել տալ Գր. Անավարզեցուն<sup>27</sup>: Սակայն իր կառավարման առաջին շրջանում Հեթումը չկարողացավ իրագործել եկեղեցիների միավորման ծրագիրը, ուստի իշխանությունը հանձնեց իր եղբայր Թորոսին, իսկ ինքը քաշվեց վանք:

Այսպիսով, Հեթում Բ-ի կառավարման առաջին շրջանում Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև հաստատված հավասարակշռությունը խախտվեց: Եկեղեցիների միավորման ծրագիրը իրագործելու համար Հեթումը փորձեց յուրացնել հոգևոր իշխանությանը յուրահատուկ հատկանիշներ և դարձավ կրոնավոր: Հանդես գալով որպես միանգամայն թագավոր և կրոնական գործիչ՝ նա սկսեց միջամտել հայոց կաթողիկոսության գործերին: Սակայն այս ժամանակաշրջանում Հեթումը չկարողացավ կենսագործել իր ծրագիրը և հրաժարվելով աշխարհիկ իշխանությունից՝ քաշվեց վանք:

**ВЗАИМООТНОШЕНИЯ СВЕТСКОЙ И ДУХОВНОЙ  
ВЛАСТИ В ПЕРВЫЙ ПЕРИОД ПРАВЛЕНИЯ ГЕТУМА II  
В КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ (1289-1293)**

АРУТЮНЯН Г. С.

**Резюме**

В первые годы правления Гетум II в целях реализации программы по объединению церковью принял духовный сан. Будучи царем и в то же время религиозным деятелем, он стал принимать активное участие в делах католикосата. Однако ему не удалось претворить в жизнь намеченной программы, в результате чего он вынужден был отказаться от светской власти и посвятить себя служению церкви.

---

<sup>27</sup> Պատմություն նահանգին Միսական, էջ 446: